# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<29>> հուլիսի 2011թ. N 263 - Ա

ք. Արմավիր

### ԳՈՀԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2011 թվականի հուլիսի 29-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր չստանալու պատճառով լուծել <<Դողսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Ավետիսյանի հետ 2005 թվականի օգոստոսի 3-ին կնքված N 80 աշխատանքային պայմանագիրը:
2. <<Դողսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Գոհար Ավետիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի օգոստոսի 2-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ